# ՈՐ՞Ն Է ՎԵՐԱԿԱՆԳՆՈՂԱԿԱՆ ՊՐԱԿՏԻԿԱՆ

Վերականգնողական պրակտիկան համայնքի կերտման հիմք է ծառայում և իրական երկխոսության միջոցով անդրադառնում է բարդ վարքագծին՝ ճիշտ ուղի ընթանալու համար: Վերականգնողական պրակտիկան աջակցում է բոլոր շահագրգիռ կողմերի միջև առողջ փոխհարաբերություններին՝ մեր աշխատակիցներին ու աշակերտներին օգնելու առօրյա հաջողության հասնելու համար և ան արձանագրելու իրենց անձնական, սոցիալական և ուսումնական ջանքերում:

**Ինչո՞ւ ենք վերականգնողական պրակտիկան օգտագործում**

Մարդ արարածը ավելի երջանիկ է, գործունյա ու համագործակցող և հավանաբար ավելի դրական փոփոխություններ է կատարում իր վարքագծում, երբ ղեկավար տարրն ամեն ինչ անում է աշակերտների հետ, այլ ոչ թե նրանց համար: Վերականգնողական պրակտիկան հնարավորություն է տալիս աշակերտներին պատասխանատվություն հանձն առնել իրենց վարքագծի համար և զարգացնել հասկացողություն, թե ինչպես է իրենց վարքագիծը ազդում ուրիշների վրա և սովորել, թե ինչպես կարելի է ճիշտն անել:

## Ուսումնական հաջողություն

Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ աշակերտը պետք է իրեն անվտանգ ու հարգված զգա և պատկանելիության ուժեղ զգացում ունենա որպեսզի կարողանա հասնել ուսումնական հաջողության: Վերականգնողական պրակտիկան ստեղծում է այդ զգացումը:

**Maslow's Hierarchy**




**Ինչպե՞ս ենք օգտագործում վերականգնողական պրակտիկան:**

## Դասարանի կառավարում

Վերականգնողական դասարանային միջավայրը սկսվում է կառավարման ոճով, որը հարգում է հարաբերությունները հեղինակավոր, վճռական և արդար ձևով: Սույն ուսուցիչները համատեղում են բարձր վերահսկողությունն ու բարձր աջակցությունը և ամեն ինչ անում են աշակերտների հետ, այլ ոչ թե նրանց համար:




## Շրջանաձև խմբակներ օգտագործելով համայնքի կերտում

Վերջին հաշվով, վերականգնողական պրակտիկան համայնք կերտելու մասին է որպեսզի հնարավոր լինի *վերականգնել* այն համայնքը, երբ խնդիրներ են առաջանում:

Շրջանաձև խմբակն ունի կառուցվածք, նպատակաուղղում և կենտրոնացում, որի նպատակը համայնք կերտելն է: Խմբերը հավաքվում են շրջանաձև՝ միմյանց ճանաչելու, պատմություններով կիսվելու, ուսումնական ծրագիրը քննարկելու, հարցերին պատասխանելու կամ խաղեր խաղալու համար: Սա կանխազդիչ մոտեցում է և Վերականգնողական արդարադատության հիմնարար պրակտիկա: Խմբակները մարդկանց հնարավորություն են տալիս խոսել ու լսել միմյանց անվտանգության, արժանապատվության ու հավասարության մթնոլորտում: Շրջանաձև խմբակի գործընթացը թույլ է տալիս մարդկանց պատմել իրենց պատմությունները և առաջարկել իրենց սեփական հեռանկարները: Շրջանաձև խմբակն ունի զանազան նպատակներ՝ հարաբերությունների զարգացում, հակամարտությունների լուծում, բուժում, աջակցություն, որոշումների ընդունում և տեղեկատվության փոխանակում:

## Ազդեցիկ լեզու

Ազդեցիկ արտահայտությունները ցույց են տալիս զգացմունք, առանձնացնելով գործը կատարողից, և ցույց են տալիս աշակերտին, որ չափահասները հոգ են տանում նրանց մասին:

| Ազդեցիկ արտահայտության օրինակներ | |
|---|---|
| **Տիպիկ պատասխան** | **Ազդեցիկ արտահայտություն** |
| Բավակա՛ն է, որ կարենին ծաղրես: | Ես անհանգստանում եմ, որ դու ծաղրում ես Կարենին |
| Ներս դի՛ր քո հեռախոսը: | Ես հիասթափվում եմ, որ քո հեռախոսը դուրս ես բերում: |
| Նստի՛ր և լռի՛ր | Ես բարկանում եմ, որ դու խոսում ու կատակում ես իմ դասավանդության ընթացքում: |
| Ի՞նչ է քեզ պատահել | Ես մտահոգվում եմ, որ դու չես մասնակցում: |

## Վերականգնողական կարգապահություն

***Փոքր դեպքերի հանդիպումներն*** արագորեն անդրադառնում են խնդրին, որպեսզի կանխեն դրա սրացումը և աշակերտները կարողանան ակտիվորեն արտահայտել իրենց զգացմունքները՝ մտածելով իրենց վարքագծի հետևանքի մասին: Փոքր խոչընդոտների ժողովում չափահասը հանդես է գալիս միջնորդի դերում, որը թույլ է տալիս երկու կողմերին լսել և մասնակցել խնդրի լուծմանը՝ հավանաբար կրկնվել թույլ չտալու համար:

***Պաշտոնական հանդիպումները*** համակարգված հանդիպում է կարգազանցների, տուժողների և երկու կողմերի ընտանիքների միջև, որտեղ նրանք որոշում են, թե ինչպես պետք է սխալն ուղղել: Դա հնարավորություն է ընձեռում կարգազանցին հանդիմանելու, զգացմունքներ արտահայտելու և խնդիրը պարզաբանելու համար հարցեր հարցնելու: Այստեղ կարգազանցը լսում է, թե ինչպիսի ազդեցություն է ունեցել իր կատարածը ուրիշների վրա: Կարգազանցը ենթարկվում է պատասխանատվության, սակայն հնարավորություն է ունենում մաքրել «կարգազանց» պիտակը և վերադառնալ դպրոց:

### Ազդեցիկ հարցեր

Ազդեցիկ հարցերը օգնում են ստեղծել արդար գործընթաց բոլոր մասնակիցների համար: Դրանք անդրադառնում են անպատշաճ վարքագծին այնպիսի ձևով, որ աշակերտը մտածի իր կատարած արարքների մասին և մտածի, թե ինչպես է դա ազդում ուրիշ մարդկանց վրա: Սա պատասխանատվությունը վերցնում է չափահասից և դնում է աշակերտի վրա, որի վարքագիծը խնդրահարույց է:

| Ազդեցիկ հարցեր | |
|---|---|
| **Անդրադառնալու խնդրահարույց վարքագծին** | **Օգնելու նրանց, ովքեր տուժել են** |
| Ի՞նչ պատահեց: | Ի՞նչ մտածեցիր, երբ հասկացար, թե ինչ է տեղի ունեցել: |
| Ինչի՞ մասին էիր մտածում այդ ժամանակ: | Ինչպիսի՞ ազդեցություն ունեցավ այս միջադեպը ձեր և մյուսների վրա: |
| Ի՞նչ ես մտածում այդ ժամանակից ի վեր: | Ի՞նչ է եղել ամենադժվարը ձեզ համար: |
| Ո՞վ է տուժել ձեր արարքից: Ինչպես են նրանք տուժել: | |
| Ի՞նչ ես կարծում պետք է անես ամեն ինչ շտկելու համար: | Ի՞նչ ես կարծում պետք է տեղի ունենա ամեն ինչ շտկելու համար |




*Իսկապես լսելու համար պետք է խիզախել ընդմիշտ փոխվել:*

*Sakejh Henderson*

## Գլենդելի հանրային դպրոցների կրթաշրջան




## Վերականգնողական պրակտիկան հիմնականում վերաբերում է հարաբերությունների կառուցմանն ու վերականգնմանը